## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գիրքը երրորդն է համանուն ժողովածուների շարքում։ Ինչպես նախորդ երկուսը, սույն ժողովածուն ևս նվիրված է էսթետիկական գիտության հրատապ տարբեր հարցերի։ Զետեղված հոդվածները լուսաբանում են հետևյալ պրոբլեմները՝ ազգայինի և ինտերնացիոնալի փոխհարաբերությունն արվեստում, արվեստի հետազոտմանը վերաբերող մի շարք նորագույն հարցադրումներ ու մոտեցումներ, էսթետիկական դաստիարակության առանձին ասպեկտներ, արվեստի լեզվի որոշ տարրերի (գույնի և հնչյունի) էսթետիկական նշանակության և ընկալման օրինաչափությունները։ Ժողովածուի վերջում ընթերցողին ներկայացվում է համառոտ ակնարկ սովետական ականավոր տեսաբան Ա. Ա. Ադամյանի կյանքի և գործունեության մասին։

Հոդվածագիրները տարբեր բուհերի ու գիտահետազոտական հիմնարկությունների ներկայացուցիչներ են, երկուսը՝ Մոսկվայից։ Ցավոք, նրանցից մեկը՝ Ն. Փարսադանովը, հանկարծամահ եղավ և չտեսավ հայերենով տպագրված լինելու իր ջերմ ցանկության իրականացումը։

Ժողովածուն նախատեսվում է էսթետիկայի հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանի համար և մի համեստ փորձ է՝ արձագանքելու ՍՄԿԿ XXVII համագումարի պահանջին՝ սովետական մարդկանց էսթետիկական դաստիարակության և ուսուցման հետագա ծավալմանը։